

Մրցույթի հայտարարություն

«Արագածոտնի մարզի Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոցը

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

«Արագածոտնի մարզի Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոցի» կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի» 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Արագածոտնի մարզի Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոցի» կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) Հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Արագածոտնի մարզի Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոցում 2021 թվականի մարտի 22-ից մինչև ապրիլի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև ժամը 16.00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 12.00-ին**, «Արագածոտնի մարզի Սիփանի Ֆ.Ուսըվի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար դիմել՝

1.Ալմաստ Հսոյան, հեռ. 098570445,

2.Ստալիկ Ավդալյան, հեռ. 093219101,

էլ հասցե sipan@schools.am